ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ընթերցողի սեղանին է մեր հանդէսի 840-րդ համարը՝ ոչ դիւրին մաքառումով, անկումներով ու նուաճումներով բնորոշուող բազմաբարդ ճանապարհի հերթական հանգրուանը. 70 բովանդակալից տարիների ճանապարհ, որ հարազատ արտայայտութիւնն է հայ ճողովրդի եւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու նորագոյն պատմութեան:

«Էջմիածին» ամսագիրը կոչուած էր անմիջական շարունակողը լինելու «Արարատ»-ի, որ կէսդարեայ արդիւնաւոր գործունէութիւնից յետոյ, անկախութեան կարճատեւ տարիներին՝ 1918-1919 թթ. ընկրկեց դժուարութիւնների առաջ եւ դադարեց 1919-ին: Երբ հաստատուեց խորհրդային անաստուած իշխանութիւնը, կարծես, այնուամենայնիւ, Մայր Աթոռին մի պահ յաջողուեց ձեռք բերել հանդէսը վերսկսելու իրաւունք (տե՛ս «Էջմիածին», 1975, Բ. էջ 4), բայց խոստումը մնաց անկատար: Հանդէսի անհրաժեշտութեան գաղափարը, սակայն, չէր մոռացւում, իսկ իրական վերածնունդը վերապահուած էր 1944-ին: Կաթողիկոսական ազգընտիր տեղապահ Գէորգ արքեպ. Չէորէքչեանի պատմական նամակին ի պատասխան՝ երկրի միանձնեայ ղեկավարը հաւանութիւն տուեց «Արարատ» ամսագրի վերականգնման ծրագրին: Իսկ ծրագիրը («Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան պաշտօնական օրգան «Արարատ» ամսագրի նախագիծ») նախատեսում էր՝ «Ամսագիրը կընծայուի նախկին վերտառութեամբ՝ «Արարատ»: Պարբերականի շապիկին կլինի Էջմիածնի նկարը Արարատի ֆոնին»: Ամենայն հաւանականութեամբ քաղաքական նկատառումով նախընտրութիւն տրուեց «Էջմիածին» խորագրին, բայց շապիկի ձեւաւորումը կատարուեց ըստ նախնական յղացման:

Ամսագիրը արտացոլելու էր Մայր Աթոռի «գործունէութիւնը, որպէս համայն հայութեան մշակութային կենտրոն եւ պիտի ամրապնդէր Էջմիածնի ու Սփիւռքի կապը, աջակցէր հայագիտական հետազօտութիւնների խթանմանը, ընթերցողին ծանօթացնէր մշակութային անանց արժէքներին՝ ունենալով պաշտօնական, կրօնագիտական, բանասիրական, պատմագիտական ուղղութիւն:

1944 թ. սկսեց կանոնաւորապէս լոյս տեսնել Մայր Աթոռի պաշտօնաթերթը, որ իրօք եղաւ «Արարատ»-ի աւանդների շարունակողը, մանաւանդ որ նորոգ հանդէսի առաջին հեղինակների մէջ էին նշանաւոր հոգեւոր գործիչներ ու գիտնականներ, որ ժամանակին աշխատակցել էին «Արարատ»-ին (Գարեգին արքեպ. Յովսէփեան, Ստեփանոս Մալխասեանց,

Գարեգին Լեւոնեան, Երուանդ Տէր-Մինասեան, Հրաչեայ Աճառեան, Գէորգ արքեպ. Չէորէքչեան, Մինաս Մինասեան եւ ուրիշներ):

Հանդէսի անդրանիկ համարի առաջնորդողն ազդարարում էր. «Հայրապետական ամսագիրը հանդիսանում է այն միջոցը, որը պէտք է համախմբի Սփիւռքի բոլոր հայերին իրենց սրբազան Հայրենիքի շուրջը, Մայր Աթոռի շուրջը»: Շեշտւում էր, որ «հայը Հայաստանից դուրս չունի այլ կռուան, բայց եթէ Մայր Հայրենիքը, Հայ Եկեղեցին եւ նրան գլխաւորող Ամենայն Հայոց Հայրապետութիւնը՝ Սուրբ Էջմիածնի Հայրապետական Աթոռով... Այս պատգամով հրապարակ է գալիս Հայրապետական ամսագիրը, նոյն այդ պատգամով նա կը շարունակի իր գոյութիւնը եւ հետագայում» (էջ 4): Մայր Աթոռի եւ Սփիւռքի կապն ամրապնդելու եւ հայագիտական հետազօտութիւններին զարկ տալու կոչուած պաշտօնաթերթի ծնունդը խանդավառութեամբ ընդունուեց հայաշխարհում, յուսալով՝ «զի արդարութիւն Աստուծոյ նովաւ յայտնի հաւատոց ի հաւատս» (Հռովմ. Ա. 17):

Արձագանքները չեն ուշանում: Մասնաւորաբար վիրահայոց թեմն անբաւարար է համարում ստացած օրինակների քանակը եւ պահանջում է առնուազն 300 օրինակ, այն պարագային, երբ պարբերականի ընդհանուր տպաքանակը 400 էր: «Հայաստանեայց Եկեղեցի» հանդէսը տպագրում է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Ա. Յովսէփեանի խօսքը: Ոգեւորուած առաջին համարի յայտնութեամբ՝նա յարում է«ամէն կերպով պիտի աշխատենք մասնակից լինել նորա յառաջադիմութեան»:.

Ըստ նախանշուած ծրագրի՝ ամսագիրն արձագանքում է Հայրենի երկրի հոգեւոր, մշակութային, քաղաքական կեանքում տեղի ունեցող բոլոր կարեւոր իրադարձութիւններին, լուսաբանում է Սփիւռքի հայութեան կեանքի երեւոյթները, Հայրենիքի եւ Սփիւռքի հայութեան, քոյր եկեղեցիների առօրեան, խնդիրներն ու յաջողութիւնները: Ամսագիրը հրատարակում է հայ հին մատենագրութեան անտիպ բնագրեր, գրախօսում նոր գրական ու գիտական, արուեստաբանական հրատարակութիւնները, արձագանքում է նաեւ համամարդկային բնոյթ կրող կարեւորագոյն հարցերին:

Պատմական յարընթացի տարբեր փուլերում անհրաժեշտաբար ծրագիրը կրել է ինչ-ինչ փոփոխութիւններ, պահպանելով, սակայն, հիմնական ուղղութիւնն ու սկզբունքները, ծառայելով համայն հայութեան եւ հայրենաբնակ ժողովրդի միասնութեանը: Իր հիմնական աշխատանքին զուգընթաց որոշ ժամանակ՝ 1956-1973 թթ. ամսագրի խմբագրութիւնը իրականացնում է նաեւ Մայր Աթոռի գրահրատարակչական գործի կազմակերպչական աշխատանքները՝ լոյս ընծայելով մի քանի տասնեակ գրքեր:

Եօթ տասնամեակ շարունակ պարբերականի խմբագրութեան իրար յաջորդող սերունդներն զգացել են Ամենայն Հայոց հայրապետների մշտական հոգատարութիւնը եւ անսակարկ նուիրումով ծառայել են իրենց կոչմանը: Այժմ, երբ հանդէսը թեւակոխել է իր գոյութեան նոր տարեշրջանը, մաղթենք, որ աշխատակազմի ջանքերը արգասաւորուեն նորանոր ձեռքբերումներով, այսուհետեւ նոյնպէս վայելելով Ամենայն Հայոց Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետի մշտական հոգածութիւնը, եւ հանդէսը առաւել յաջողութեամբ շարունակի ծառայել Հայրենի մշակոյթին ու Եկեղեցուն, որպէսզի ի հեճուկս աջից ու ահեակից երբեմն թափանցող մոլորութիւնների՝ մեր «փոքր ածուն»՝ Քրիստոսի հօտը, մնայ անաղարտ, եւ չնուազեն փարախի լոյսն ու ջերմութիւնը: